

Ամփոփվեցին հրամանատարաշտաբային ուսումնավարժության արդյունքները

15.04.2015

Ապրիլի 14-ին և 15-ին Գեղարքունիքի մարզպետարանում անցկացվեց հրամանատարաշտաբային ուսումնավարժություն, որին ընդգրկված էին մարզի քաղաքաշտաբային և զորահավաքային մարմինների ղեկավար կազմերը, քաղաքաշտաբային ծառայությունները, տարհանման հանձնաժողովի, Նորատուսի և Երանոսի համայնքապետարանների ներկայացուցիչները, ղեկավար կազմերը: Ուսումնավարժության թեման «Նորատուս և Երանոս համայնքներում քաղաքաշտաբային և զորահավաքային համակարգերը խաղաղից ռազմական դրության անցնելուն», վերաբերող գործողությունն էր, որտեղ գործում էին քաղաքաշտաբային և զորահավաքային պլաններին համապատասխան, և պատրաստ էին պահեստային կառավարման կետերը: Ապրիլի 15-ի օրվա երկրորդ կեսին ամփոփվեցին երկօրյա ուսումնավարժության արդյունքները: